ՍՓՅՈՒՌՔԻ ՄԱՍԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ԲԵԺԱՆՅԱՆ Ա. Գ.

Վերջին շրջանում նկատելի է «սփյուռք» բառի առավել լայն գործածություն: Այսօր արդեն արևմտյան վերլուծաբանները գործածում են մի շարք եզրույթներ, որոնք տարիներ առաջ գոյություն չունեին. սփյուռքյան (diasporic and diasporan), *սփյուռքություն կամ սփյուռքամետություն* (diasporicity or diasporism), *սփյուռքացում* (diasporization), *ապասփյուռքացում* (de-diasporization), *վերասփյուռքացում* (rediasporization), *սփյուռքագիտություն կամ սփյուռքագրություն* (diasporology or diasporistics)*:*

Մինչև 1970-ական թթ. սփյուռքագիտական ուսումնասիրությունները սահմանափակվել են հրեական, հայկական, մասամբ նաև աֆրիկյան և չինական սփյուռքի պատմությանը, առանձին շերտերին, համայնքներին, ինչպես նաև հայրենիք-սփյուռք հարաբերություններին և հայրենադարձությանն առնչվող հարցադրումներով[1]*: 1991 թ. Կանադայում հրատարակվող «Սփյուռք. անդրազգային հետազոտությունների ամսագիրը»* [Diaspora*:* A Journal of Transnational Studies] *(խմբագիր՝ պրոֆեսոր Խաչիկ Թոլոյան) անդրադառնում է ավանդական (հրեական, հայկական, հունական) սփյուռքին և վերջին երեսուն տարիների ընթացքում ձևավորված «նոր» համայնքների վերլուծություններին՝ շեշտադրելով սփյուռքի անդրազգային հատկանիշները: 1999 թ. Մոսկվայում լույս է տեսնում ռուսալեզու «Սփյուռք»* [Диаспоры] *հանդեսը, որի նպատակն է վերհանել ինչպես ռուսական սփյուռքի, այնպես էլ հետխորհրդային Ռուսաստանում ապրող էթնիկ սփյուռքյան համայնքների հիմնախնդիրները: 2002 թ. Տուլուզ-լը-Միրայի համալսարանի «ՍՓՅՈՒՌՔ. պատմություն և հասարակություններ»* [DIASPORAS. Histoire et socintns] *ամսագիրը լուսաբանում է սփյուռքի, միգրացիայի, էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունների խնդիրները պատմության, սոցիոլոգիայի և բազմաառարկայական հետազոտությունների տեսանկյունից: 2011 թ. Նյու Դելիում հրատարակվող «Սփյուռքագիտական հետազոտություններ»* [Diaspora Studies] *ամսագիրը նվիրված է սփյուռքյան (հիմնականում հնդկական) անդրազգային ցանցերի համեմատական ուսումնասիրությանը՝ որպես միջազգային հարաբերությունների ուշագրավ գործոն:*

Նկատենք նաև, որ ԽՍՀՄ փլուզումը և սառը պատերազմի ավարտը, ինչպես նաև համաշխարհայնացումը (գլոբալացումը) թեմատիկ և

---

[1] *Հայկական սփյուռքի ուսումնասիրությունների մասին տե՛ս* **Դալլաքյան Կ.**, *Հայ Սփյուռքի պատմություն, Ե., 1997:*

մեթոդաբանական առումներով նշանակալից ազդեցություն են ունեցել սփյուռքագիտական հետազոտությունների վրա:

Հայկական սփյուռքին նվիրված ուսումնասիրությունները թեև անդրադառնում են հայ սփյուռքի պատմությանը, սփյուռքյան կառույցներին և հաստատություններին, սփյուռքահայ գրականությանը և լեզվին, ինչպես նաև հայկական սփյուռքի առջև ծառացած հիմնախնդիրներին, այնուամենայնիվ, հակված չեն բովանդակել տեսական դրույթներ և առավել ևս զարգացնել դրանք: Սույն հոդվածի նպատակն է լրացնել այդ բացը և ներկայացնել արևմտյան գրականության մեջ գործածվող սփյուռքի հիմնական սահմանումները և տեսությունները՝ առաջարկելով սփյուռքագիտական տեսությունների դասակարգման մոդել:

Հոդվածում օգտագործվել են սփյուռքագիտության հայտնի տեսաբաններ Ու. Սաֆրանի, Գ. Շեֆերի, Ռ. Կոհենի, Ռ. Բրուբեյքրի, Կ. Բաթլերի, Խ. Թոլոյյանի, Ս. Վերթովեքի, Ջ. Քլիֆորդի, Պ. Գիլռոյի և այլոց աշխատությունները:

Հոդվածի հինգ ենթաբաժիններն անդրադառնում են՝ ա) սփյուռքի տեսակներին, բ) սփյուռքի ձևավորման ժամանակաշրջաններին, գ) ինքնության հիմնատարրերին, դ) սփյուռքի գաղափարախոսական հենքին և ե) սփյուռքի հիմնական տեսություններին:

Սփյուռքը հաճախ համեմատվում է գլուխկոտրուկի հետ. այդ երևույթը քննելիս գիտնականները կարևորում են սփյուռքի առաջացման պատճառների, նրա ձևավորման հիմնական ժամանակաշրջանների, սահմանման և ապագայի հարցերը:

Հին Հունաստանում սփյուռք բառը (διασπορά) նկարագրում էր իշխող քաղաք-պետության քաղաքացիների տեղաշարժը հայրենի երկրից, որի նպատակը կողոպուտի և ռազմական նվաճման միջոցով գրավյալ տարածքներն ընդարձակելն ու ձուլելն էր: Սփյուռք բառի աստվածաշնչյան կիրառությունը կապված էր հրեաների՝ Քրիստոսին Մեսիա չընդունելու և աստծո օրենքներին չհնազանդվելու պատճառով աստծո կողմից պատժված լինելու հետ: Եբրայերենում, սակայն, ավելի ուշ սփյուռք (גלות-Galut) բառի նշանակությունը վերափոխվել է՝ նկարագրելու հրեաների աքսորը Պաղեստինից, որի կիզակետում Երուսաղեմի կործանումն ու տաճարի պատերի քանդումն են՝ որպես սփյուռքի ողբերգական փորձառության հիմնաքար[2]:

Ըստ Մերիամ Վեբսթրը[3] բառարանի՝ Դիասպորան (մեծատառ) (ա) բաբելոնցիների կողմից աքսորված հրեաների բնակեցման և գաղթօջախների ձևավորման գործընթացն է Պաղեստինից դուրս, և (բ) Պաղեստինից և ներկայիս Իսրայելից դուրս բնակվող հրեաներն են: Սփյուռք (փոքրատառ) եզրույթը բնութագրում է ժողովուրդների տեղաշարժը, միգրացիան կամ նախահայրենիքից ցիրուցան լինելն ու բուն գաղթօջախները:

---

[2] **Dufoix S.** *2008. Diasporas, The Regents of the University of California Press, 2008.*

[3] **Merriam-Webster.** *Incorporated. 2013. (http://www.merriam-webster.com/dictionary/diaspora).*

Ա. Սփյուռքի տեսակները: *Սփյուռքի սահմանման բարդությունը ստիպել է տեսաբաններին խորամուխ լինել այն պատճառների և պայմանների մեջ, որոնք հանգեցրել են սփյուռքի ի հայտ գալուն*[4]*: Սփռվելու պատճառներից հատկանշական են բռնավտարումը հայրենիքից, գերությունը (ներառյալ ստրկացումը), բռնի տեղահանությունը և աքսորը, կամավոր տարագրումը, արտագաղթը, միգրացիան, կայսերապաշտությունը և այլն:*

Ելնելով սփյուռքյան կազմակերպությունների համախմբվածության և ակտիվության մակարդակից՝ Մեդամը տարբերակել է «բյուրեղացված սփյուռք» և «հեղհեղուկ սփյուռք» հասկացությունները: Բյուրեղացված սփյուռքը բնութագրվում է մեծ դինամիկայով և անդրազգային ցանցերի առկայությամբ և ակտիվությամբ[5]*:*

Մ. Բրյունոյի դասակարգման մոտեցումը հիմնվում է սփյուռքի կազմակերպական կառուցվածքի վրա: Նա առանձնացրել է սփյուռքի գործարար (չինական, լիբանանյան), կրոնական (հրեական) և քաղաքական (պաղեստինյան, տիբեթյան) տարբերակները[6]*: Հաշվի առնելով սփյուռքի քաղաքական կարևորությունը՝ Գ. Շեֆերը գործածության մեջ է դրել «պետականահեն» և «պետականազուրկ սփյուռք» եզրերը*[7]*: Բաթլերի սփյուռքյան մոդելը հիմնվում է ինքնության առանձնահատկությունների վրա՝ կրոնական (հրեական), ազգային (հայկական, հնդկական), էթնիկ (քրդական, կաշմիրի), տարածաշրջանային (կարիբյան), աշխարհամասային (աֆրիկյան)*[8]*:*

Սփյուռքի տիպավորման Ֆ. Կուրտիսի մոտեցումն ընդգծում է սփյուռքյան խմբի նախնական գործունեությունը, օրինակ՝ առևտուրը[9]*: Ռ. Կոհենը*[10] *սահմանում է սփյուռքի հետևյալ տիպերը՝ զոհ (օրինակ՝ աֆրիկյան, հայկական, հրեական, պաղեստինյան), աշխատանքային (թուրքական), առևտրային կամ գործարար (չինական, լիբանանյան), կայսերական (բրիտանական, ֆրանսիական) և մշակու-թային*[11] *(կարիբյան)*[12]*:*

---

[4] **Sideri, E.** *2008. The Diaspora of the Term Diaspora: A Working-Paper of a Definition, in Cultures in Transit (http://transtexts.revues.org/index247.html).*

[5] **Anteby-Yemini L.** *et Berthomière, W. 2005. Diaspora: A Look Back on a Concept in Bulletin du Centre de recherche français à Jérusalem, no 16, 262-270. (http://bcrfj.revues.org/index257.html).*

[6] **Anteby-Yemini L.** *et Berthomière, W. 2005.*

[7] *Ibid. Հրեական սփյուռքի օրինակով կարելի է ենթադրել, որ պետականազուրկ սփյուռքը կարող է փոխակերպվել պետականահեն սփյուռքի և ընդհակառակը: Սակայն մինչև այժմ միայն հրեական սփյուռքին է հաջողվել կերտել ազգային պետություն:*

[8] *Նույն տեղում:*

[9] *Նույն տեղում:*

[10] **Cohen, R.** *1997. Global Diasporas: An Introduction. London: Routledge.*

[11] **Anteby-Yemini L.** *et Berthomière, W. 2005.*

[12] *Մշակութային սփյուռքը բնորոշվում է մշակութային առանձնահատկությունների պահպանությամբ և վերարտադրմամբ: Կարիբյան կղզիների աֆրիկյան ներգաղթյալներին*

Բ. Սփյուռքի ձևավորման հիմնական ժամանակաշրջանները: *Ակնհայտ է, որ սփյուռքի տիպավորումը, բացի սփյուռքացման պատճառներից, ինքնության, նախնական գործունեության և այլ առանձնահատկություններից, ունի նաև որոշակի ժամանակային դրսևորումներ: Մ. Ռեյսը սփյուռքի ձևավորումը բաժանում է երեք հիմնական պատմական ժամանակաշրջանի՝ դասական կամ հին, արդի և ժամանակակից կամ հետարդիական: Արդի ժամանակաշրջանը կապվում է ստրկության ու գաղութատիրության հետ՝ 1500-1814 թթ. եվրոպական կապիտալի տարածումից մինչև 1914-1945 թթ.: Ըստ Ռեյսի՝ սփյուռքի ժամանակակից շրջանը սկսվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ ապագաղութացմանը սկսեցին հաջորդել Ասիայի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների զանգվածային միգրացիան և ներհոսքը դեպի նախկին գաղութատիրական երկրներ.*[13]

Դ. Ինքնության հիմնախնդիրը: *Բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել՝ պարզելու, թե ինքնության ո՞ր տարրերն են որոշիչ ազգային պատկանելության համար: Սփյուռքի համատեքստում կարևոր է հասկանալ կապը անհատի և հավաքական ինքնության միջև:*

Քննելով սփյուռքանդամների վարքագծի տարբեր դրսևորումներ՝ Շեֆերը սփյուռքը տրոհում է հետևյալ կատեգորիաների՝ «միջուկ», «լուսանցքային անդամներ» և «նիրհողներ»: Սփյուռքի «միջուկը» այն անհատներն են, որոնք ունեն անարատ ազգային ինքնություն, կարող են գոյատևել որպես առանձին կազմակերպված համայնք՝ անկախ բոլոր գործընթացներից (արդիականություն, համաշխարհայնացում և այլն), սերտորեն միավորված են, և հետևաբար նրանց չի սպառնում վերացման վտանգը: «Լուսանցքային» անդամներն ունեն էթնիկ ինքնություն, սակայն դիտավորյալ իրենց չեն նույնացնում սփյուռքյան համայնքի հետ: Ընդունող հասարակությունում ամբողջովին ինտեգրված և ձուլված անհատներին պայմանականորեն անվանում են «նիրհողներ», որոնց սփյուռքանդամ համարելը խնդրահարույց է[14]*: Հ. Գանսը սփյուռքյան կեցվածքը կորցրած և հայրենիքը վանող սփյուռքանդամների ինքնությունն անվանում է «խորհրդանշական»*[15]*:*

Սփյուռքագիտական գրականությունն անդրադարձել է նաև սփյուռքանդամների և միգրանտների միջև առկա ամենակարևոր տարբերություններին՝ ինքնության տեսանկյունից: Տեսության մեջ

հաջողվել է պահպանել բնիկ աֆրիկյան մշակույթը և ստեղծել այդ մշակույթին հարազատ նոր արտահայտչամիջոցներ:

[13] **Reis M.** *2004. Theorizing Diaspora: Prospectives on "Classical" and "Contemporary" Diaspora. International Migration 42 (2):41-60.*

[14] **Sheffer G.** *2006. Transnationalism and Ethnonational Diasporism. Diaspora 15(1): 121-45. Ընդհանուր առմամբ սփյուռքի քանակի մասին խոսելիս միտում կա, ըստ ծագման կամ արյունակցական կապի, բոլորին ներառել մեկ միասնական խմբի մեջ, որը, գործնական և քաղաքական նկատառումներից ելնելով, կարող է արդարացված լինել:*

[15] **Sheffer G.** *1986. A New Field of Study: Modern Diasporas in International Politics, in Gabriel Sheffer (ed.) Modern Diasporas in International Politics, London: Croom Helm, pp. 1-15.*

տարածված է այն մոտեցումը, թե սփյուռքանդամների և հայրենիքի (ծագման երկիր) միջև առկա է մշակութային, լեզվական, կրոնական, պատմական և հուզական (զգացական) կապը, մինչդեռ միգրանտների կարգավիճակը ենթադրում է ընդունող երկրում ձուլվելը, նոր սովորույթներ ընդունելը, քաղաքացիություն ձեռք բերելը, ընդունող երկրի լեզուն սովորելը և այլն: Սակայն միգրանտները (երբեմն փոխադարձ) բախման մեջ են գտնվում թե՛ հայրենիքի, թե՛ ընդունող հասարակության և թե՛ սփյուռքի հետ՝ հրաժարվելով անդամագրվել գոյություն ունեցող սփյուռքյան կառույցներին, ինչպես նաև հիմնել սեփական կազմակերպությունները[16]: Նկատենք, որ պատմականորեն միգրացիոն հոսքերը որոշակի ազդեցություն են թողնում սփյուռքի վրա[17], սփյուռքն էլ իր հերթին է ազդում միգրանտների ինքնության վրա: Ընդունված է կարծել, թե միգրանտների համար հայրենիքից հեռանալու և արևմուտքում հաստատվելու հիմնական նպատակը նյութական բարեկեցությունն է, մինչդեռ հոգևոր, մշակութային և հուզական արժեքների կարիքը ստիպում է կառչել հայրենիքից: Երբ հայրենիքից հեռացումն ընկալվում է որպես կարճաժամկետ, իսկ վերադարձը՝ մշտառկա[18], անհատի մեջ միգրանտը կերպափոխվում է սփյուռքանդամի:

Բայցևայնպես, արդյո՞ք սփյուռքյան ինքնությունը միայն անհատի որոշման արդյունքն է: Ըստ Թոլոյանի՝ սփյուռքյան կեցվածք է ընդունում այն փոքրամասնությունը, որին քաղաքական կամ մշակութային շինարարները սփյուռք են համարում: Սփյուռքի ձևավորումը և գոյատևումը (նույնիսկ միգրացիայի դեպքում) պայմանավորված են մշակութային, սոցիալական ու քաղաքական ընտրախավի գիտակցված և կազմակերպված ջանքերով, որոնք շարունակական բնույթ են կրում և փոխանցվում սերնդեսերունդ[19]: Մինչդեռ սփյուռքի գոյատևմանն ուղղված ջանքերի բացակայությունը տանում է դեպի ուծացում[20]: Երբ բացակայում է հայրենիքի ընկալումը, և առկա է կազմակերպչական դեֆիցիտ, սփյուռքը դառնում է ընդամենը վիրտուալ երևույթ՝ զուրկ միջազգային և պետական համակարգերի վրա ազդեցությունից[21]:

Կոնստրուկտիվիստները հակադարձել են այն տեսաբաններին, որոնք սփյուռքը բնութագրում են որպես քաղաքականությունից դուրս մի բնական վիճակ, որն ինքնաբերաբար առաջանում է միգրացիայի հետևանքով:

---

[16] **Butler K.** *2001. Free Articles Base, n.d. Diaspora: Origins, Development and Types. (http://pagerankstudio.com/Blog/2010/10/diaspora-origins-development-types/).*

[17] **Keck M. and Sikkink K.** *1999 Transnational Advocacy Networks in International and Regional Politics, Blackwell Publishers, UNESCO, 89-101.*

[18] **Butler K.** *2001. Free Articles Base, n.d. Diaspora: Origins, Development and Types.*

[19] **Tölöyan K.** *2000. Restoring the Logic of the Sedentary to Diaspora Studies, in Berthomière, W. and Sheffer, G., Anteby, L. 2000 ans de diasporas, Presses Universitaire de Rennes, 137-148. Gold, S. J. 2004. From Nationality to Peoplehood: Adaptation and Identity Formation in the Israeli Diaspora. Diaspora 13(2/3):331-58.*

[20] *Նույն տեղում:*

[21] **Keck M. and Sikkink, K.** *1999.*

Նրանց պնդմամբ սփյուռքը ձևավորվում կամ մոբիլիզացվում է ուղղության (discourse) միջոցով. այն «վերնախավային ձեռնածության և քաղաքական մոբիլիզացիայի միջոցով սոցիալական շինվածք (social construction) է»: Ադամսոնի կարծիքով սփյուռքը ռազմավարական սոցիալական ինքնության շինարարությունը հաջողելու քաղաքական ձեռնարկի անդրազգային մոբիլիզացիայի արդյունք է: Ի մի բերելով այս մոտեցումները՝ սփյուռքը կարելի է սահմանել որպես հայրենիքից դուրս ապրող էթնիկ խմբի անդամների ամբողջություն կամ անդրազգային մտատիպային համայնք (transnational imagined community)[22] և վերնախավային քաղաքական ծրագիր, որը ժամանակի ընթացքում իրագործվում է անդրազգային մոբիլիզացիայի միջոցով[23]:

Ե. Սփյուռքի գաղափարախոսական հենքը: *Գաղափարախոսություններն[24] ու ազգային ինքնությունը ծառայում են որպես հախուռն խմբերը և համայնքային տարբերությունները փոխկապակցված անդրազգային ցանցերի մեջ միավորող մերան: Առաջին հայացքից ակնհայտ է, որ սփյուռքի մտահոգության առարկան ոչ թե համընդհանուր, այլ մասնավոր խնդիրներն են, իսկ առաջնային շարժիչ ուժը՝ ինքնությունը, այլ ոչ թե քաղաքական համոզմունքը: Խոսքը ազգայնականության անդրազգային դրսևորման մասին է, որը պատմականորեն զորավոր խթան է եղել սփյուռքի ներքին փոխհարաբերությունների, քաղաքական կողմնորոշման, ինչպես նաև տնտեսական ռազմավարության համար[25]: Բ. Անդերսոնն այդ անվանում է հեռավար ազգայնականություն (long distance nationalism), որն իր՝ ապագային սպառնալու հնարքով գրավում է մարդկանց: Սփյուռքանդամը հազվադեպ է հարկեր վճարում հայրենիքում (որտեղ քաղաքականություն է իրականացնում), կարողանում է խույս տալ հաշվետվողականությունից, հավանաբար չի մասնակցում ընտրություններին, քանի որ այլ երկրի քաղաքացի է, ո՛չ ինքը և ո՛չ էլ իր ընտանիքի անդամները սեփական գործողություններից բխող իրավական հետևանքներից վախենալու պատճառ չունեն: Ավելին, զարգացած երկրներում բարեկեցիկ և ապահով «դիրքավորված» սփյուռքանդամը կարող է սեփական միջոցներն ուղղորդել, շրջանառության մեջ դնել քարոզչական մեխանիզմներ և ստեղծել անկանխատեսելի հետևանքներով լի միջավայր՝ քաջ գիտակցելով, որ հնարավոր է երբեք չվերադառնա հայրենիք[26]: Ի տարբերություն մարդու իրավունքների կամ այլ գլոբալ ակտիվիստների*

---

[22] *Նույն տեղում: Սփյուռքագիտությունն այս համատեքստում ընկալվում է որպես անդրազգայնության ենթաճյուղ, իսկ սփյուռքը՝ ոչ թե պատճառ, այլ հետևանք:*

[23] *Նույն տեղում: Gold, S. J. 2004.*

[24] **Sheffer G.** *1986. Հատկանշական է, որ մարքսիստական և ազատական տեսությունները սփյուռքը դիտարկում էին որպես քաղաքական և սոցիալական զարգացման անցումային փուլ, որը մատնված էր անէացման մշակութային, սոցիալական և քաղաքական հանդուրժողականության պատճառով:*

[25] **Keck M. and Sikkink K.** *1999.*

[26] *Նույն տեղում:*

գործունեության՝ անդրազգային ազգայնականությունը չի սահմանափակվում որոշակի ժամանակահատվածով կամ հիմնախնդրով[27]*:*

Արդիականության համատեքստում սփյուռքն ընկալվում է ոչ թե մասնավոր, այլ համամարդկային արժեքների գաղափարային կատեգորիա: Ֆրանսիական հեղափոխության համընդհանուր արժեքներն ազդեցություն են թողել նաև սփյուռքյան արժեհամակարգի վրա: Սփյուռքի նպատակը ոչ թե մասնավոր, այլ համընդհանուր իրավունքների ձեռքբերումն է՝ առանց հրաժարվելու ազգային ինքնությունից: Համընդհանուր արժեքների դիտարկումը սփյուռքի հարացույցում հնարավորություն է ընձեռում քննելու այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են մարդու իրավունքները, ռասայական խտրականությունը, ապագաղութացմանն ուղղված շարժումները և այլն: Ամերիկյան (մաշկի գույնի հիմքով) խտրական քաղաքականության դեմ հինդուների հակափաստարկը հիմնվել է համամարդկային իդեալների վրա՝ մարդկանց նմանություն անկախ ռասայական պատկանելությունից, անհատական արժանիք և համամարդկային արժեհամակարգ: Սա չի ենթադրում, թե հինդուները հրաժարվել են էթնիկ կամ մշակութային ինքնությունից, այլ ընդգծում է այն գաղափարախոսությունը, որը խարիսխ է հանդիսացել սփյուռքյան պայքարի համար: Բրիտանական գաղութատիրության կամ բրիտանական կայսերական սփյուռքի դեմ պայքարելիս նույնպես՝ հինդուները, մյուս գաղութացված ժողովուրդների նման, վկայակոչում էին համամարդկային արժեքները[28]*:*

Գ. Սփյուռքի հիմնական տեսությունները: *Հաշվի առնելով, թե սփյուռքը սահմանելիս ինչ հարթության վրա է հայրենիքը, մենք առանձնացնում ենք հետևյալ երեք խմբերը.*

1. Առաջին խմբի տեսաբաններ Ու. Սաֆրանի, Կ. Բաթլերի, Գ. Շեֆերի, Ռ. Կոհենի, Բրուբեյքրրի աշխատություններում հայրենիքը սփյուռքի սահմանման առանցքում է: Ուստի մենք այդ տեսություններն անվանում ենք հայրենակենտրոն:

2. Երկրորդ խմբի տեսաբաններ Ս. Վերթովեքը, Ս. Դյուֆուան, Խ. Թոլոյանը, Ա. Ապադուրին, որոնք, թեպետ սփյուռքը սահմանում են որպես ուրույն սոցիալական ձև, հաստատություն կամ անդրազգային համայնք, այնուամենայնիվ, հակված են ընդգծելու սփյուռքի բնույթը՝ որպես անկախ միավոր:

3. Երրորդ խմբի տեսաբաններ Քլիֆորդի, Գիլռոյի և այլոց աշխատություններում սփյուռքի սահմանումը հիմնվում է հայրենամերժության գաղափարի վրա:

ա. Սփյուռքի հայրենակենտրոն տեսությունները: *Սփյուռքի հայրենակենտրոն սահմանումն ընդգծում է ազգային ողբերգության կամ բռնի տեղահանության հետևանքով զոհի կարգավիճակում հայտնված էթնիկ խմբի*

---

[27] **Baser B.** *2011. 'Kurdish Diaspora Political Activism in Europe with a Particular Focus on Great Britain,' Bergh of Peace Support and Centre for Just Peace and Democracy.*

[28] **Banerjee, S.** *2006. Empire, the Indian Diaspora and the Place of the Universal. Diaspora 15(1):147-166.*

գոյությունը՝ հայրենիքից անդին, որի հավաքական հիշողությունը հիմնված է հայրենիք վերադառնալու տեսլականի վրա:

Վ. Սաֆրանը սփյուռք է համարում այն գաղթական համայնքները, որոնք (կամ նրանց նախնիները) սփռվել են նախահայրենիքից (կենտրոն) դեպի օտար (ծայրամասային) շրջաններ, 2) ունեն հավաքական հիշողություն, տեսլական կամ մյութոս իրենց իսկական հայրենիքի, դրա գտնվելու ֆիզիկական վայրի, պատմության և նվաճումների մասին, 3) հավատացած են, որ անհնար է ամբողջությամբ ինտեգրվել ընդունող հասարակությունում, ուստի և մասամբ օտարված են զգում այնտեղ, 4) նախնիների հայրենիքին վերաբերում են որպես իրենց իսկական, իդեալական հայրենիքի, ուր իրենք կամ իրենց զավակները պետք է վերադառնան, 5) հավաքական ուժերը նվիրաբերում են հայրենիքի պահպանությանը կամ վերականգնմանը, անվտանգությանն ու բարեկեցությանը, 6) շարունակում են անհատապես կամ զգացականորեն կապված մնալ հայրենիքին, որով էլ պայմանավորված են նրանց համերաշխությունը և էթնոհամայնքային գիտակցությունը[29]:

Սաֆրանի սահմանումն ակնհայտորեն ընդգծում է, որ աշխարհագրորեն տարանջատված համայնքները հայրենիքում ապրող ազգակիցների հետ միևնույն ազգի ամբողջության մաս են կազմում՝ հավաքական հիշողության, հայրենիքամետ կեցվածքի, հայրենիքի հետ զգացական կապի շնորհիվ:

Արմսթրոնգը սփյուռքը դիտարկում է որպես «միաձույլ մարմին՝ հայրենի երկրում ապրող մարդկանց հետ հուզական, ազգակցական և ծագումնաբանական կապեր ունեցող խումբ»: Ի տարբերություն Արմսթրոնգի՝ Կոհենը պնդում է, որ սփյուռքը միաձույլ համարել չի կարելի՝ հաշվի առնելով միգրացիոն տարբեր հոսքերի ազդեցությունը սփյուռքյան համայնքների վրա[30]: Նա ավելացնում է նախահայրենիքից երկու կամ ավելի օտար երկրներում սփռվելու հանգամանքը: Ի տարբերություն Սաֆրանի սահմանման, որտեղ վերադարձի գաղափարն ապագայամետ է և տեսլական, Կոհենը շեշտում է «համընդհանուր հավանության արժանացած վերադարձի շարժման առկայությունը»: Սաֆրանը և Կոհենն առանձնացնում են հայրենիքի իդեալականացումը և հավաքական հիշողության ու մյութոսի գոյությունը որոշակի աշխարհագրական տարածքի հետ նույնացվող հայրենիքի պատմական փառքի և ձեռքբերումների մասին, հավաքական պատասխանատվությունը հայրենիքի պահպանման, վերականգնման, անվտանգության, նույնիսկ կերտման համար[31]:

---

[29] **Safran W.** *1991. Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return. Diaspora 1(1): 83-84.*

[30] **Keck M. and Sikkink K.** *1999.*

[31] **Butler K.** *2001. Սփյուռքը տարբերվում է քոչվոր խմբերից կամ էթնիկ համայնքներից իր հայրենակենտրոն ինքնությամբ: Հայրենիքից զուտ ֆիզիկական անջատվածության պատճառով կտրված համայնքներին նույնպես չի կարելի դասել սփյուռքի շարքում, քանի որ անկլավում են հայտնվել ժողովրդագրական փոփոխությունների հետևանքով, այլ ոչ թե հայրենազրկման, աքսորի կամ բռնի տեղահանման պատճառով և կարողացել են պահպանել*

Արդյո՞ք անհրաժեշտ է, որ սփյուռքյան համայնքները փոր- ձեն կամ ցանկանան վերադառնալ նախնիների երկիր: ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, այդ թվում՝ սեփական երկրից մեկնելու և իր երկիրը վերադառնալու իրավունք»[32]: Պետք է նկատել, որ սփյուռքյան ինքնությունը հիմնված է երկու հակասական երևույթների վրա. հայրենիքից հեռու գտնվելով հանդերձ՝ սփյուռքանդամն ունի հայրենաբաղձության ուժեղ զգացում: Հայրենիքի հետ հարաբերությունների դինամիկան ենթադրում է հնարավոր կամ փաստացի վերադարձը, որը հայրենիքի իդեալականացումը հակադրում է ընդունող երկրի հանդեպ կապվածությանը: Հաճախ ոչ թե ֆիզիկական վերադարձն է էական սփյուռքյան ինքնության համար, այլ դրա արծարծումը որպես կենսական թեմա[33]:

Սփյուռքի հայրենակենտրոն առանձնահատկություններից են հայրենիքի հետ զգալի շփումները, իրական կապերը և խորհրդանշանները[34]: Պակաս կարևոր չէ նաև սփյուռքյան տարբեր համայնքների միջև համերաշխության ու հուզականության առկայությունը[35]: Հուզականության հիմքը հայրենիքի կարևորումն ու արժևորումն են՝ որպես իդեալ և մյութոս, որն արտահայտվում է հայրենիքի և ինքնության միջև անքակտելի կապով, հպարտության և պատկանելության զգացումով: Արդարև, սփյուռքը գոյատևում է, երբ 1) սփյուռքանդամները և սփյուռքյան փոքր խմբերը, անհատական և ընտանեկան հույզերից զատ, իմացականորեն և զգացականորեն ընդունում են, որ ավելի մեծ միավորի են պատկանում, որի հետ անքակտելիորեն կապված են համերաշխությամբ և ողջ էթնոազգային միավորին ծառայելու նվիրումով, և 2) անհատ սփյուռքանդամները, նրանց ընտանիքները և փոքր խմբերը միանշանակ հրապարակավ արտահայտում են իրենց պատկանելությունը ավելի մեծ էթնոազգային միավորին[36]: Պատկանելության զգացումն է, որ սփյուռքանդամներին դրդում է սոցիալ-քաղաքական ակտիվություն ցուցաբերել ընդունող երկրում և հայրենիքում: Սփյուռքյան ինքնության այդ հիմնատարրն այլ կերպ կոչվում է պարտավորվածության քաղաքականություն[37]: Էթնիկ պատկանելության վրա խարսխված հավաքական գիտակցությամբ, մեկ միասնական պատմություն և ճակատագիր

քաղաքական կշիռ ու լեզվական ինքնավարություն: **Safran W.** *1991 Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return. Diaspora 1 (1): 83-99.*

[32] *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 13.2, էջ 48, «Մարդու իրավունքներ» ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի ընտրանի, Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ, Ե., 2009:*

[33] **Butler K.** *2001.* **Safran W.** *1991. Երբեմն վերադարձը ներիմաստավորվում է ընդունող երկրում առկա խտրական քաղաքականության հետևանքով, որն էլ հանգեցնում է սփյուռքանդամների միջև համերաշխության:*

[34] **Sheffer G.** *1986.*

[35] **Cohen R.** *1996.*

[36] **Sheffer G.** *2006.*

[37] *Նույն տեղում:*

ունենալու հանգամանքով, ինչպես նաև խմբին պատուհասվելիք աղետի վախի զգացումով են պայմանավորված սփյուռքանդամների օտարվածությունն ընդունող հասարակությունից[38]:

Սփյուռքի մյուս առանձնահատկությունը հայրենիքի սահմաններից դուրս առնվազն երկու սերնդի գոյությունն է: Այն խմբերը, որոնք հայրենիք են վերադառնում առաջին սերնդի ընթացքում, կարող են բնութագրվել որպես ժամանակավոր տարագրության մեջ գտնվողներ[39]: Բազմասերնդայնությունը անհատի արտագաղթը միակցում է խմբի հավաքական պատմությանը և հայրենիքի սահմաններից դուրս համայնքի վերաստեղծմանը[40]:

Ըստ Բրուբեյքրրի՝ սփյուռքը յուրօրինակ պահանջ է ու կեցվածք՝ օժտված հետևյալ հատկանիշներով՝ 1) սփռվածություն, որը ցնցման (տրավմա) կամ բռնի տեղահանման հետևանքով պետական սահմաններից դուրս հայտնվելն է, ինչպես նաև էթնիկ հայրենիքի սահմաններից անդին հոծ համայնքների գոյությունը, 2) հայրենակենտրոն կողմնորոշում դեպի իրական կամ մտատիպային հայրենիքի արժեքները՝ որպես ինքնության և լոյալության (հավատարմության) աղբյուր, 3) սահմանային տարանջատում՝ ընդունող երկրի հիմնական ազգային ինքնությունից տարբերվելը՝ որպես սփյուռքապահպան անհրաժեշտ պայման: Սահմանային տարանջատումը հայրենիքում և ընդունող երկրում առկա ինքնակազմակերպման ձևից տարբերվող ներքին կազմակերպական համակարգի գոյությունն է[41]: Բրուբեյքրրն իրավացիորեն էթնիկ հայրենիքի սահմանները չի նույնացնում արդի ազգային պետության հետ, այլ առանձնացնում է հայրենիքի պատմական ընդգրկումը: Թեև սփյուռքացման հետևանքով հայրենիքը դադարում է ֆիզիկապես գոյություն ունենալուց կամ խիստ փոփոխությունների է ենթարկվում, այնուամենայնիվ, շարունակում է ծառայել որպես սփյուռքյան ինքնագիտակցության հիմք[42]: Իրական և մտատիպային հայրենիքի միջև կապն առաջնային է, որը, սակայն, մարդկանց մտապատկերում կարող է աղավաղված լինել: Կարևորը հայրենիքի (իրական թե մտատիպային) հանդեպ լոյալությունն է[43]: Այս առանձնահատկությունը հատկապես առանցքային է պետականազուրկ (ի տարբերություն պետականահեն) սփյուռքի պայմաններում, որտեղ ինքնության պահպանումը որոշիչ դեր ունի սփյուռքի՝ որպես մշակութային միավորի գոյատևման հարցում: Պատմական հայրենիքում ձևավորված մշակութային ու սոցիալական խորհրդանշանների և մտատիպային հայրենիքի

---

[38] **Cohen R.** *1996.*

[39] **Rios M. & Adiv N.** *2010. Geographies of Diaspora: A Review. Davis, CA: UC Davis Center for Regional Change.*

[40] **Butler K.** *2001. Այս համատեքստում սփյուռքը դիտարկվում է որպես համայնքի ձևավորման մոդել:*

[41] **Brubaker R.** *2005. The "Diaspora" Diaspora. Ethnic and Racial Studies, vol. 28, N 1, pp. 1-19).*

[42] **Vertovec S.** *1997. Three Meanings of "Diaspora", Exemplified Among South Asian Religions, Diaspora 6 (3): 277-99.*

[43] **Keck M. and Sikkink K.** *1999.*

ներգործությունը և դրանց վերարտադրությունը սփյուռքում վկայում են սփյուռքի՝ որպես մշակութաստեղծ երևույթի մասին[44]:

բ. Սփյուռքը՝ անկախ միավոր: *Ս. Դյուֆուայի պնդմամբ սփյուռքի հայրենակենտրոն սահմանումը հիմնվում է հրեական/հայկական սփյուռքի «իդեալական տիպային» մոդելի վրա և բացառում սփյուռքյան հատկանիշներ ունեցող այլ խմբերին[45]:*

Մինչև 1960-ական թթ. պետությունները փորձում էին կանոնակարգել միգրացիան ըստ էթնիկ, ռասայական և այլ առանձնահատկությունների: Ենթադրվում էր, որ միգրանտ խմբերը պետք է ձերբազատվեին էթնիկ ինքնությունից՝ ձուլվելով տեղային մշակույթին: Սակայն արտագաղթի ահագնացող ալիքի հետևանքով նույնիսկ ամենաազատական և ազդեցիկ երկրներն են հրաժարվել ուծացման քաղաքականությունից կամ չեն կարողացել գտնել ներգաղթողներին մեկ մշակութային խառնարանի մեջ ձուլելու հաջողության բանալին[46]:

Ինտեգրման մոդելի վրա հիմնված ձուլման տեսության[47] պրակտիկայում անհաջողության մատնվելու պատճառով սփյուռք հասկացությունը սկսել է տարածվել էթնիկ ավանդույթներով և հավաքական համերաշխության ուժեղ զգացումով միմյանց կապված էթնիկ և ռասայական փոքրամասնությունների, փախստականների, միգրանտների և այլ խմբերի վրա:

Ս. Վերթովեքը սփյուռքը դիտարկում է որպես սոցիալական ձև՝ ընդգծելով գլոբալ տարակենտրոնացվածությունը և հավաքական ինքնությունը, ներքին կազմակերպական կառուցվածքը, բազմակողմանի հարաբերությունները սփյուռքյան համայնքների, հայրենիքի և ընդունող երկրի միջև, ինչպես նաև առանձնահատուկ տնտեսական ռազմավարության և քաղաքական օրակարգի առկայությունը.[48]

Սոցիալական հարաբերությունները ենթադրում են ա) հավաքական ինքնության գիտակցված պահպանում, որի հիմքում ընկած են «էթնիկ մյութոսը», պատմությունը և հստակ աշխարհագրական տարածքի հանդեպ պատկանելության զգացումը, բ) փոխադարձ հարաբերությունների և

---

[44] **Vertovec S.** *1997.*

[45] **Safran W.** *2003 Recent French Conceptualizations of Diaspora. Diaspora 12(3): 437-41.*

[46] **Giri Bed P.** *2005 Diasporic Postcolonialism and its Antinomies. Diaspora 14(2/3): 215-235. Ըստ Փ. Գիռոյի՝ աֆրոատլանտյան սփյուռքին չի կարելի վերագրել առանձնահատուկ էթնիկ-ռասայական ինքնություն, քանի որ վերջինս նույն եվրոպական արդիականության (modernity) բաղկացուցիչ տարրն է, որը, սակայն, արմատներով կապված է Աֆրիկային:*

[47] *Migration Policy Institute, 2012-2013. (http://www.migrationinformation.org/USfocus/display.cfm?ID=442). Ձուլման ինտեգրման մոդել– սոցիալական սերտ հարաբերություններ հյուրընկալող հասարակության անդամների հետ, որին հաջորդում է խառնամուսնությունների կտրուկ աճը, էթնիկ պատկանելությանը փոխարինում է քաղաքացիությունը, իսպառ բացակայում են նախապաշարումները, խտրականության զգացումը և արժեքների բախումը:*

[48] **Vertovec S.** *1997.*

հաղորդակցման ցանցերի հաստատութենականացում (ինստիտուցիոնալիզացիա) պետական սահմաններից դուրս, համայնքային նորատիպ կազմակերպությունների հիմնում, գ) հայրենիքի հետ ուղղակի կամ անուղղակի կապերի պահպանում, դ) համախմբման նպատակով կապերի զարգացում այլ երկրներում ապրող համազգի (համէթնիկ) հանրույթների հետ, ե) ընդունող հասարակությունում ինտեգրվելու կարողության կամ ցանկության պակաս, օտարվածության, մերժման, առավելության կամ ինչ-որ տիպի «տարբերության» զգացումի խթանում[49]:

Քաղաքական հստակ կողմնորոշման միջոցով սփյուռքյան կազմակերպությունները և խմբերը կարող են ճնշում գործադրել հայրենիքի և ընդունող երկրի ներքին, ինչպես նաև արտաքին քաղաքականության վրա՝ գործի դնելով հայրենազրկման կամ տարածքազրկման (deterritorialization) պատճառով «հայրենիքի հանդեպ ծայրահեղ քննադատության կամ կապվածության ուժեղ զգացումը»[50]: Ս. Դյուֆուան առանձնացնում է սփյուռքի դերը հայրենիքի ազգային անվտանգության հարցում, ինչպես նաև հայրենիք-սփյուռք առճակատման հնարավորությունը[51]: Սփյուռքյան որոշ խմբեր նույնիսկ ձգտում են հասնել տնտեսական առավելության՝ ռեսուրսները միավորելու, տրանսֆերտների, կապիտալ ներդրումների, ընտանիքի անդամներին, ազգականներին և նույն էթնիկ խմբին ծառայություններ մատուցելու շնորհիվ[52]: Լ. Պայրոս-Հեսթերը դա անվանում է «էթնիկության ռեսուրսի ռազմավարական օգտագործում»[53]:

Որպես սոցիալական ձև՝ սփյուռքի որոշ առանձնահատկություններ (միջհամայնքային փոխադարձ կապեր, հարաբերություններ հայրենիքի և ընդունող երկրների հետ) համընկնում են անդրազգային համայնքի հատկանիշներին[54]: Հ. Շուվալի պնդմամբ «սփյուռքի տեսությունը նույնպես կապված է անդրազգայնության և համաշխարհայնացման տեսություններին», իսկ Խ. Թոլոյյանը նշել է, թե «սփյուռքը անդրազգային պահի օրինակելի համայնք է»[55]: Անդրազգայնությունն ունի երկու կողմ. թեպետ անհատը, հայրենիքից արտագաղթելով, խզում է հարաբերությունները հայրենիքի հետ, այնուամենայնիվ շարունակում է կապված մնալ հայրենիքին և ազգությանը[56]: Ս. Սպադուրին սփյուռքն անվանում է «էթնոտարածք», որի անդրազգային բնույթը բխում է ներքին կազմակերպական ձևերից և սփյուռքն օժտում առանձնահատուկ անկախությամբ հայրենիքի ու ընդունող երկրի հետ հարաբերություններում: Դյուֆուան դա անվանում է սփյուռքի հաստատութենական

---

[49] Նույն տեղում:
[50] Նույն տեղում:
[51] **Minassian G.** *2006.*
[52] **Vertovec S.** *1997.*
[53] **Butler K.** *2001.*
[54] **Rios M. & Adiv N.** *2010.*
[55] **Tölölyan K.** *1991. The nation-state and its others: In lieu of a preface, Diaspora 1 (1): 3-7.*
[56] **Rios, M. & Adiv N.** *2010.*

(ինստիտուցիոնալ) մոդել և ընդգծում ընդունող երկրի պայմանները՝ հայրենիքից անդին ուրույն տիեզերք կերտելու գործում[57]:

Սփյուռքի և հայրենիքի փոխադարձության հարցը[58] քննելիս պետք է նկատել, որ չնայած մշտական կապի առկայությանը, հայրենիքի վերաբերմունքը սփյուռքի հանդեպ կարող է լինել անորոշ և երկակի: Միշտ չէ, որ հայրենիքի կառավարությունն անվերապահորեն աջակցում է սփյուռքին: Նմանապես միշտ չէ, որ սփյուռքն աջակցում է հայրենիքի կառավարությանը: Դրա լեգիտիմության շուրջ փոխհամաձայնության բացակայությունը կարող է սփյուռքում պառակտման տեղիք տալ[59]:

Քաղաքական համակարգում սփյուռքի դերի մեծացումը մարտահրավեր է արտաքին քաղաքականության որոշումների կայացման ավանդական (միջպետական հարաբերություններ, միջազգային կազմակերպություններ, մարդասիրական հասարակական կազմակերպություններ) ձևերին[60]: Արդի ժամանակաշրջանում սփյուռքը համարվում է միջազգային համակարգի «անխուսափելի» տարր, քանի որ կարող է 1) ընդունող երկրում ինքնակազմակերպվելով առավելագույնի հասցնել իր քաղաքական ազդեցությունը, 2) հայրենիքի քաղաքականության վրա ճնշում գործադրել, 3) չմիջնորդավորված համագործակցել այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ[61]:

Արդյո՞ք սփյուռքի անդրազգային քաղաքական բնույթը կարող է փոխել ազգային պետության տեսական և պրակտիկ կարևորությունը՝ որպես միջազգային քաղաքականության հիմնասյուն: Այս հարցը խոր քննության կարիք ունի: Ավելին, սակավ ուսումնասիրություններ են կատարվել՝ պարզաբանելու ընդունող երկրի քաղաքական համակարգը և հայրենիքի արտաքին քաղաքականությունը սփյուռքի ինքնադրսևորման հնարավորությունների վրա:

---

[57] **Safran W.** *2003 Recent French Conceptualizations of Diaspora. Diaspora 12(3): 437-41.*

[58] **Scottish Government,** 2009. Scottish Diaspora and Diaspora Strategy: Insights and Lessons from Ireland, Social Research. *Ըստ Օ' Ռայեյնի՝ գոյություն ունի հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների պետական կարգավորման մի քանի ձև՝ 1) զրոյական (absent)– հարաբերությունները կարգավորվում են ըստ առաջարկի և պահանջարկի կամ սփյուռքի ինքնակազմակերպմամբ, 2) խնամատար (custodian) – հայրենիքն աջակցում, պաշտպանում և կանոնակարգում է նոր ձևավորվող սփյուռքյան կապերը, 3) ստնտուական (midwife) – հայրենիքը հայտնաբերում է պոտենցիալ առաջնորդներին և նրանց առաջ ճանապարհ հարթում՝ միևնույն ժամանակ սփյուռքին թողնելով տիրոջ իրավունքը, 4) մշակող (husbandry) – հայրենիքն աշխատում է առկա սփյուռքյան կազմակերպությունների և ցանցերի հետ, 5) կերտող (demiurge) – հայրենիքն ուղղակիորեն ստեղծում և կառավարում է սփյուռքյան նախաձեռնությունները:*

[59] **Sheffer.**

[60] **T. Lyons and Mandaville P.** *2010. Diasporas in Global Politics, George Mason University. (http://www.gmu.edu/centers/globalstudies/publications/rpbop/policybriefGMTPJune2010.pdf).*

[61] **Shain Y. & Cofman Wittes T.** *2002 Peace as a Three-Level Game: The Role of Diasporas in Conflict Resolution in Ambrosio, Thomas. "Ethnic identity groups and U.S. foreign policy". Praeger Publishers. (http://en.wikipedia.org/wiki/Diaspora_politics_in_the_United_States).*

գ. Սփյուռքը՝ հայրենամերժ երևույթ: *Սփյուռքամետությունը կարելի է համարել հայրենամերժության հիմքը: Սփյուռքամետությունը սփյուռքի ընկալումն է որպես դրական երևույթ, երբ աշխարհագրական հայրենիքը փոխատեղվում է սփյուռքով, իսկ հայրենիքի ընկալումը բացակայում է կամ մերժվում: Ըստ սփյուռքամետության հրեական մեկնաբանության՝ հուդայականությունը և արդի հրեական մշակույթն առավել զարգացել են Իսրայելից դուրս՝ խթանելով հայրենիքի ընկալումը ոչ թե որպես աշխարհագրական տարածք, այլ վերաշխարհագրական երևույթ, որի հիմքում նախևառաջ ընկած են կրոնական և հոգևոր գաղափարները*[62]*:*

Հետգաղութատիրության և համաշխարհայնացման տեսությունները նոր մարտահրավեր են նետել սփյուռքագիտության հիմնարար հարցադրումներին՝ էթնիկ համերաշխություն, հայրենիքի հանդեպ պատասխանատվություն և նվիրվածություն: Սփյուռքի հետգա-դութատիրական տեսության հիմքում Երկրորդ աշխարհամարտին հաջորդած պատմաքաղաքական զարգացումներն են հետևյալ առանցքներով՝ 1) «բարձր մշակույթի» եվրոպական մոդելների փոխարինումը մշակութային արժեքների ժողովրդականություն վայելող և ծայրագավառային տարբերակներով, 2) ԱՄՆ-ի ի հայտ գալը որպես գերտերություն և նրա դերը «գլոբալ մշակույթի ստեղծման և տարածման գործում», 3) երրորդ աշխարհի երկրների ապագաղութացումը և մշակույթի վրա ապագաղութացման ազդեցությունը[63]*:*

Հետգաղութատիրական սփյուռքյան մշակույթը արվեստի, կինոյի, գրականության արմատական կամ ուտոպիստական զգացումների աղբյուր է: Փակագծերում պետք է ավելացնել, այնուամենայնիվ, որ արևմուտքում հայտնված երբեմնի գաղութացված երկրների ընտրախավը հաճախ, հանուն սեփական բարեկեցության ընդունելով գաղութացնող ուժերի գաղափարախոսությունը, իր իսկ հայրենակիցներին արջի ծառայություն մատուցողի դերում է հայտնվել[64]*:*

Սփյուռքի հետգաղութատիրական տեսությունը մեծ առումով հարցականի տակ է դրել սփյուռքի ձևավորման՝ «ողբերգական» փորձառության և սփռվածության վրա խարսխված սահմանումը: Ըստ հետգաղութատիրական տեսության՝ ոչ թե պետք է խուսափել սփյուռքից, այլ այն ընդունել որպես համայնքային ամուր փոխհարաբերությունների և պատկանելության այլընտրանք, որին հատուկ են մերժված անհատները, խառնածին մշակույթները[65]*, ոտնահարված պոեզիան, կենտրոնի բացակայությունը*[66]*: Ավելին, սփյուռքը դիտվում է ոչ թե որպես ողբերգության և սփռվածության վրա հիմնված էմպիրիկ իրականության արտացոլանք, այլ «հավաքական ինքնության փոխաբերություն», որի պատճառներն արմատավորված են*

---

[62] **Clifford J.** *1994. Diasporas (Cultural Anthropology 9 (3): 302-38).* **Giri Bed P.** *2005.*

[63] **Clifford J.** *1994.*

[64] *Նույն տեղում:*

[65] **Vertovec S.** *1997.*

[66] **Giri Bed P.** *2005.*

կայսերապաշտության, ստրկության և այլ ողբերգությունների մեջ[67]: Ըստ սփյուռքի հետգաղութատիրական տեսությունների՝ սփյուռքյան ինքնությունը հիմնվում է ազգային պետության մերժման վրա՝ որպես կեղեքող մարմին կամ հաստատություն: Ավելին, հայրենիքը անհիմն նույնացվում է ազգային պետության և իշխանության հետ՝ վերջիններիս վերագրելով պետական համակարգից «այլոց» (ներառյալ՝ փոքրամասնություններին և ներգաղթյալներին) բացառողի դերը[68]: Փ. Գիլրոյը, սակայն, ընդգծել է, թե վերջին հաշվով ազգային պետությանն[69] է վերապահված ձուլման կամ հայրենադարձության միջոցով սփյուռքի տարակենտրոնացումը ավարտին հասցնելու գործը[70]:

Ըստ համաշխարհայնացման տեսության՝ մարդկանց, հայրենիքի աշխարհագրական ընկալման և մշակույթի միջև կապի թուլացումը անխուսափելի և նույնիսկ ցանկալի է ավելի «մարդկային» ազատական աշխարհակարգի համար[71]: Համաշխարհայնացումը նույնպես պարարտ հող է նախապատրաստել սփյուռքյան ինքնության կերպափոխման, գոյություն ունեցող արժեքների վիճարկման, պայմանավորվածությունների ձեռքբերման, կրեոլիզացիայի[72] գործընթացների համար: Հարցականի տակ են դրվել հայրենիքի նվիրումի, հայրենիքի հանդեպ պատասխանատվության և էթնիկ համերաշխության գաղափարները: Ավելին, հայրենիքի՝ որպես աշխարհագրական տարածքի հանդեպ լոյալության մերժողականությամբ և հայրենիքից հեռացման դրական ընկալմամբ դրվել է սփյուռքի հիմքը՝ որպես քաղաքական արմատականության աղբյուր, ինքնահայրենազրկմամբ անհատի հզորացմանը հասնելու ճանապարհ[73]:

Սփյուռքի հայրենամերժ տեսություններն առավել կենտրոնանում են անհատի վերաբերմունքի վրա և անկարող են բացատրել համայնքային ընկալումները և դարձը դեպի հայրենիք: Ավելին, հայրենիքի նույնացումը ազգային պետության և իշխանության հետ արհեստականորեն սահմանափակում է սփյուռքի տեսությունների զարգացման հնարավորությունները:

Այսպիսով՝ թեև սփյուռքի գիտական ուսումնասիրությունը սկիզբ է առել XX դարում, սփյուռքը բնավ էլ նոր երևույթ չէ: Ըստ տարբեր տեսությունների՝ սփյուռքի ձևավորմանը նպաստել են այնպիսի առանցքային իրադարձություններ, ինչպիսիք են հայրենիքի կործանումը, տեղահանությունը,

---

[67] **Sheffer,** *French Conceptualization of Diaspora.*

[68] **Clifford J.** *1994.*

[69] *Այստեղ ազգային պետություն եզրույթը վերաբերում է հայրենիքին և քաղաքացիության երկրին:*

[70] **Gilroy P.** *1994 "Diaspora", Paragraph 17 (3): 207-212.*

[71] **Tölöyan K.** *2005. «Restoring the Logic of the Sedentary to Diaspora Studies», in Anteby-Yemini, L., Berthomière, W. and Sheffer, G. Les diasporas. 2000 ans d'histoire, Rennes, Presses Universitaires de Rennes, 137-148.*

[72] *Գաղութատիրության հետևանքով Կարիբյան կղզիներում բնիկների, աֆրիկացիների և եվրոպացիների փոխներգործության հետևանքով նոր մշակույթի ձևավորումը կոչվում է կրեոլիզացիա:*

[73] **Giri Bed P.** *2005.*

գաղութատիրությունը, ապագաղութացումը, պատերազմները, քաղաքական շրջադարձերը և այլն: Սփյուռքագետները փորձել են տարբերակել սփյուռքի տեսակները՝ ըստ սփյուռքացման պատճառների, նախնական գործունեության, ինքնության առանձնահատկությունների, սփյուռքի կազմակերպական կառուցվածքի, սփյուռքի քաղաքական կարևորության, սփյուռքյան կազմակերպությունների համախմբվածության և ակտիվության մակարդակի: Թեև սփյուռքին հատուկ են ներքին շերտավորումները, սփյուռքյան ինքնությունը պարունակում է ռազմավարական դերակատարության տարրեր և ձևավորվում է անհատի և հավաքականության փոխներգործության շնորհիվ՝ ներիմաստավորելով ազգային և համամարդկային արժեքներ:

Սփյուռքի հայրենակենտրոն տեսությունները միևնույն ազգային ինքնությունը կրող, սակայն աշխարհագրորեն տարանջատված հատվածները դիտարկում են որպես միաձույլ ազգային մարմին: Այդ տեսություններն ընդգծում են որևէ ցնցման (տրավմա) կամ ողբերգության պատճառով մի շարք երկրներում սփռվելը, ազգային ինքնության պահպանումը հայրենիքից անդին, հայրենիքի հավաքական ընկալումը, ազգային պատկանելությունը և ընդունող հասարակությունում օտարվածության զգացումը, ինչպես նաև վերադարձը հայրենիք: Հայրենակենտրոն տեսությունները հակված չեն նույնացնելու հայրենիքը ազգային պետության հետ և առավել կարևորում են հայրենիքը (իրական թե մտատիպային) և դրա հանդեպ լոյալությունը:

Հայրենակենտրոն տեսությունները հիմնականում հիմնվում են սփյուռքի հայկական և հրեական մոդելի վրա, մինչդեռ XX դարի կեսերից ի վեր սփյուռք հասկացությունը սկսել է կիրառվել՝ նկարագրելու մի շարք քաղաքական զարգացումների հետևանքով արևմուտքում հաստատված էթնիկ ավանդույթներով և հավաքական համերաշխությամբ միմյանց կապված տարբեր փոքրամասնություններին, փախստականներին և այլ խմբերին: Սփյուռքագիտական տեսությունների զարգացմամբ ի հայտ են եկել այնպիսի թեզեր, որոնք առավել կարևորում են ինչպես սփյուռքի ներքին կազմակերպական համակարգի գոյությունը, այնպես էլ միջհամայնքային փոխներգործությունների, հայրենիքի և ընդունող երկրի հետ հարաբերությունների դինամիկան: Այդ տեսությունները հակված են սփյուռքը դիտարկել որպես անկախ միավոր, որը ձգտում է առավելագույնի հասցնել ինքնարտահայտման հնարավորությունները, ժամանակի ընթացքում վերարտադրվել, ունենալ տնտեսաքաղաքական և մշակութային ազդեցություն՝ մարտահրավեր նետելով միջազգային հարաբերությունների ավանդական դերակատարներին, ընդհուպ ուժային պայքարում հասնել գերազանցության:

Ազատական գաղափարների տարածումը և համաշխարհայնացումը հարցականի տակ են դրել սփյուռքի ձևավորման ողբերգական փորձառության և սփռվածության վրա խարսխված սահմանումը և սփյուռքյան ինքնության հիմնաքարերը՝ հայրենիք, համերաշխություն, վերադարձ: Հայրենամերժ տեսությունները, ի տարբերություն հայրենակենտրոն տեսությունների, ոչ թե

սփյուռքանդամի ինքնությունը սահմանում են հայրենիքի, այլ ազգային պետության հետ հարաբերության համատեքստում. եթե առաջին դեպքում ինքնության առանցքը հայրենիքն է, ապա երկրորդ դեպքում սփյուռքյան ինքնությունը սահմանվում է՝ ի հակադրություն ազգային պետությանն ընդհանրապես: Ուստի սփյուռքն ընկալվում է հայրենիքում ապրելու ընդունելի կամ արդարացված այլընտրանք, անհատի ինքնահզորացման հնարավորություն, մարդու համընդհանուր իրավունքների պաշտպանության և արմատական գաղափարների խթանման աղբյուր: Առավել կենտրոնանալով անհատի վարքագծի վրա՝ սփյուռքի հայրենամերժ տեսությունները, սակայն, անկարող են բացատրել համայնքային ընկալումները և դարձը դեպի հայրենիք:

КРАТКИЙ ОБЗОР ТЕОРИЙ ДИАСПОРЫ

БЕЖАНЯН А. Г.

Резюме

Исследования, посвященные Армянской диаспоре, хотя и отражают историю, организацию и структуру диаспоры, но не содержат теоретических положений о диаспоре, тем более направлениях её¸ развития. С целью восполнения этого пробела нами выделены следующие группы теорий диаспоры: родиноцентричные теории, теории, рассматривающие диаспору как самостоятельную единицу, и родиноотвергающие теории.

DIASPORA THEORIES: A SHORT REVIEW

A. BEJANIAN

Abstract

Research on the Armenian Diaspora includes history, studies of diasporic organizations and institutions, literature and language of the Diaspora, as well as problems encountered by its members. However, it does not reflect theoretical aspects and development trends. The present paper seeks to fill this gap and introduce major definitions and theories about the diaspora used in Western literature. Based on the concept of homeland in defining diaspora, the author distinguishes between homeland-centered theories, theories that view diaspora as an independent unit, and homeland-denying theories.